Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-360-22.08.2022,11.01.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավիացիայի մասին» 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-81-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ եւ 9-րդ կետերով.

«8) **վատ հեղինակություն ունեցող անձ է համարվում՝**

ա. դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձը,

բ. դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առեւտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձը,

գ. սնանկ ճանաչված եւ չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձը,

դ. միջազգային հետախուզման մեջ գտնվող անձը,

ե. այն իրավաբանական անձի կառավարման վրա ազդեցության լիազորություն ունեցող անձը, որի կողմից օրենքով եւ Կառավարության որոշմամբ սահմանված թռիչքային անվտանգության ապահովման պահանջները խախտելու հետեւանքով տվյալ իրավաբանական անձի օդանավ շահագործողի վկայականի գործողությունը սահմանված կարգով դադարեցվել կամ կասեցվել է:

9) **փոխկապակցված անձինք** են համարվում անձը եւ նրա ամուսինը, 14 տարին լրացած անչափահաս զավակը, խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից նշանակված խնամակալը կամ կառավարիչը, անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, անձի հետ մեկ տարվա ընթացքում 180 եւ ավելի օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ, ինչպես նաեւ ֆիզիկական անձինք, որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:»:

Հոդված 2. Օրենքի 43-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Օդանավ շահագործողի վկայականի տրամադրումը կոմիտեի կողմից Կառավարության սահմանած կարգով մերժվում է, եթե օդանավ շահագործողի վկայական ստանալու հայտ ներկայացրած իրավաբանական անձի կառավարման վրա ազդեցության լիազորություն ունեցող անձը (ընկերության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ, բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժնի եւ այլն) մեծ մասի (վերահսկիչ փաթեթ) սեփականատեր) կամ նրա հետ փոխկապակցված անձինք ունեն տնտեսվարողի վատ հեղինակություն:»:

Հոդված 3. Օրենքի 47-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1.2-րդ մասով.

«1.2. Այն դեպքում, երբ օդանավ շահագործողի վկայական ստացած անձի համար ի հայտ են գալիս սույն օրենքի 43-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված հիմքը, որոնք հնարավոր չէ վերացնել, կոմիտեն Կառավարության սահմանած կարգով դադարեցնում է օդանավ շահագործողի վկայականի գործողությունը:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրված օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման կամ դրա մեջ փոփոխություններ կատարելու մասին հայտի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի պահանջները:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ
(*Կ-360-22.08.2022,11.01.2023-ՏՀ-011/1*)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավիացիայի մասին» 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-81-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ եւ 9-րդ կետերով.

«8) **վատ հեղինակություն ունեցող անձ է համարվում՝**

ա. դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձը,

բ. դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առեւտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձը,

գ. սնանկ ճանաչված եւ չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձը,

դ. միջազգային հետախուզման մեջ գտնվող անձը,

ե. այն իրավաբանական անձի կառավարման վրա ազդեցության լիազորություն ունեցող անձը, որի կողմից օրենքով եւ Կառավարության որոշմամբ սահմանված թռիչքային անվտանգության ապահովման պահանջները խախտելու հետեւանքով տվյալ իրավաբանական անձի օդանավ շահագործողի վկայականի գործողությունը սահմանված կարգով դադարեցվել կամ կասեցվել է:

9) **փոխկապակցված անձինք են** համարվում անձը եւ նրա ամուսինը, 14 տարին լրացած անչափահաս զավակը, խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից նշանակված խնամակալը կամ կառավարիչը, անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, անձի հետ մեկ տարվա ընթացքում 180 եւ ավելի օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ, ինչպես նաեւ ֆիզիկական անձինք, որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:»:

Հոդված 2. Օրենքի 43-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1-ին~~, 2.2 րդ եւ 2.3 րդ~~ մաս~~եր~~ով.

«2.1. Օդանավ շահագործողի վկայականի տրամադրումը կոմիտեի կողմից Կառավարության սահմանած կարգով մերժվում է, եթե օդանավ շահագործողի վկայական ստանալու հայտ ներկայացրած իրավաբանական անձի կառավարման վրա ազդեցության լիազորություն ունեցող անձը (ընկերության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ, բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժնի եւ այլն) մեծ մասի (վերահսկիչ փաթեթ) սեփականատեր) կամ նրա հետ փոխկապակցված անձինք ունեն տնտեսվարողի վատ հեղինակություն:»:

~~2.2. Սույն օրենքի իմաստով տնտեսվարողի վատ հեղինակություն ունեցող անձ է համարվում՝~~

~~1) դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար դատվածություն ունեցող անձը,~~

~~2) դատարանի կողմից ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առեւտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից զրկված անձը,~~

~~3) սնանկ ճանաչված եւ չմարված (չներված) պարտավորություններ ունեցող անձը,~~

~~4) միջազգային հետախուզման մեջ գտնվող անձը,~~

~~5) այն իրավաբանական անձի վրա կառավարման վրա ազդեցության լիազորություն ունեցող անձը, որը նախկինում ունեցել է օդանավ շահագործող վկայական եւ դրա գործողությունը սահմանված կարգով դադարեցվել կամ կասեցվել է տվյալ անձի մեղքով օրենքով եւ Կառավարության որոշմամբ սահմանված թռիչքային անվտանգության ապահովման պահանջները խախտելու հետեւանքով:~~

~~2.3. Սույն օրենքի իմաստով փոխկապակցված անձինք են համարվում անձը եւ նրա ամուսինը, անչափահաս զավակը, անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, անձի հետ մեկ տարվա ընթացքում 180 եւ ավելի օր համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ, ինչպես նաեւ ֆիզիկական անձինք, որոնք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:»:~~

Հոդված ~~2~~3. Օրենքի 47-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1.2-րդ մասով.

«1.2. Այն դեպքում, երբ օդանավ շահագործողի վկայական ստացած անձի համար ի հայտ են գալիս սույն օրենքի 43-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված հիմքը, որոնք հնարավոր չէ վերացնել, կոմիտեն Կառավարության սահմանած կարգով դադարեցնում է օդանավ շահագործողի վկայականի գործողությունը:»:

Հոդված ~~3~~4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրված օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետի երկարաձգման կամ դրա մեջ փոփոխություններ կատարելու մասին հայտի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի պահանջները:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-360-22.08.2022,11.01.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող Օրենքի 43-րդ հոդվածում լրացվող 2.2-րդ և 2.3-րդ մասեր ---------- Լրամշակված նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող օրենքի 3- հոդվածի	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող Օրենքի 43-րդ հոդվածում լրացվող 2.2-րդ և 2.3-րդ մասերն առաջարկում ենք նախատեսել «Ավիացիայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հասկացություններում՝ որպես 8-րդ և 9-րդ կետեր՝ միաժամանակ տվյալ հոդվածի մասերում կատարելով խմբագրական փոփոխություններ: Մասնավորապես նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		2-րդ մասի 8-րդ և 9-րդ կետեր	Օրենքի 43-րդ հոդվածում լրացվող՝ - 2.2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված կարգավորումներն իմաստային առումով անընկալելի են, անհասկանալի է «այն իրավաբանական անձի վրա կառավարման վրա ազդեցության լիազորություն ունեցող անձը, որը նախկինում ունեցել է օդանավ շահագործող վկայական» ձևակերպումը, ինչպես նաև «տվյալ անձի մեղքով օրենքով և Կառավարության որոշմամբ սահմանված» ձևակերպումը: Ըստ այդմ նախագծի 2.2-րդ մասի 5-րդ կետը խմբագրվել է և տեղափոխվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մաս: - 2.3-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված անձ է համարվում նաև անչափահաս զավակը: Այս առումով անչափահաս զավակի համար անհրաժեշտ է սահմանել նվազագույն տարիքային շեմ, հաշվի առնելով քրեական օրենսգրքով նախատեսված՝ քրեական		

			պատասխանատվության ենթակա լինելու տարիքը, որն իր հերթին կապված է անձի մտավոր զարգացման, ինչպես նաև իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջ չափով գիտակցելու կամ ղեկավարելու հետ, այլապես անհասկանալի է, թե ինչպես կարող է օրինակ 5 տարեկան անչափահաս զավակը ունենալ տնտեսվարողի վատ հեղինակություն: Հետևապես նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող Օրենքի 43-րդ հոդվածում լրացվող 2.3-րդ մասում սահմանվել է անչափահաս զավակի համար նվազագույն տարիքային շեմ՝ 14 տարին լրացած անչափահասը: Միաժամանակ նույն մասում որպես փոխկապակցված անձ նախատեսվել է խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից նշանակված խնամակալը կամ կառավարիչը՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով:		

2.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի **1-ին հոդվածով** առաջարկվող Օրենքի 43-րդ հոդվածում լրացվող 2.1-ին մաս ---------- Լրամշակված նախագծի **2-րդ հոդվածով** առաջարկվող Օրենքի 43-րդ հոդվածում լրացվող 2.1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող Օրենքի 43-րդ հոդվածում լրացվող 2.1-ին մասը շարադրվել է առանձին հոդվածով՝ որպես լրամշակված նախագծի 2-րդ հոդված՝ համապատասխանաբար փոփոխելով Նախագծի հոդվածների համարակալումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: